ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 04

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

Ք. Աշտարակ **30-ը հունվարի 2026թ.**

ժամը 15[00]

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Մ. Հովհաննիսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Ա. Գրիգորյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ. Գևորգյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Վ. Հարությունյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Մ. Դատումյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական
Ն. Ավանեսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական
Ս. Սարգսյան	ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ:
2. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
3. Մարզի համայնքների 2025թ. սեփական եկամուտների կատարման վերաբերյալ:
4. Մարզի համայնքների կողմից 2027-2029թթ միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) և 2026 թվականի համայնքային բյուջեների կազմման և ներկայացման աշխատանքների վերաբերյալ:
5. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2025 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
6. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:
7. Այլ հարցեր:

Օրակարգում՝

Նախքան օրակարգային հարցերի քննարկումը՝ մարզպետ Սերգեյ Մովսիսյանը ներկայացրեց ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության նորանշանակ պետ, արդարադատության 1-ին դասի խորհրդական Արթուր Մնոյանին և ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Արագածոտնի մարզային վարչության նորանշանակ պետ, ոստիկանության գնդապետ Արթուր Եգանյանին՝ մաղթելով նրանց բարեբեր, արդյունավետ աշխատանքային գործունեություն:

Լսեցին՝

1. 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց տեղեկատվություն մարզպետին կից ստեղծված մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների մասին: Նշվեց, որ խմբի անդամների կողմից 2025 թվականին 31 սուբվենցիոն ծրագրերը դիտարկելու նպատակով իրականացվել է 317 այց: Մշտադիտարկումները կատարված աշխատանքների որակի, աշխատանքների նախագծային համապատասխանության և ժամկետների ապահովման միտում ունեն: Բոլոր արձանագրված խնդիրները իրազեկվել են շտկման նպատակով:

Մարզպետ Ս. Մովսիսյանի կողմից հարցադրում եղավ սուբվենցիոն ծրագրով Ապարանի կամրջի կառուցման վերաբերյալ: Հանձնարարվեց քննարկել, ուսումնասիրել և արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն:

2. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց տեղեկատվություն ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրի ցանկում ներառված ՀՀ Արագածոտնի մարզի դպրոցների վերաբերյալ: Նշվեց, որ մարզի 45 դպրոց ընդգրկված են ՀՀ կառավարության վերոհիշյալ ծրագրում: 45 դպրոցներից 24-ը կառուցվում/վերակառուցվում են, իսկ 21-ը վերանորոգվում/հիմնանորոգվում: Այս պահի դրությամբ 24 կառուցվող դպրոցներից 4-ում աշխատանքները ավարտվել են, 19-ը կառուցման փուլում են, իսկ 1 դպրոցի կառուցման մրցույթը դեռևս չի հայտարարվել, 21 վերանորոգվող/հիմնանորոգվող դպրոցներից 2-ում աշխատանքները ավարտված են, 10-ում իրականացվում են աշխատանքներ, որից 2-ը շուտով կավարտվեն, 2 դպրոցների շինարարության մասով կնքվել են պայմանագրեր, իսկ 7 դպրոցների մասով դեռևս մրցույթներ չեն հայտարարվել:

Մարզպետի կողմից կարևորվեց նաև շինաշխատանքների ընթացքում ուսումնական դասապրոցեսների սահուն տեղափոխման աշխատանքների կազմակերպումը:

Մարզպետի կողմից նաև հանձնարարվեց Նոր Երզնկայի միջնակարգ դպրոցում ուսումնասիրություն իրականացնել, անհրաժեշտության դեպքում այդ դպրոցը ևս վերոնշյալ ծրագրում ներառելու նպատակով:

3. Մարզի համայնքների 2025թ. սեփական եկամուտների կատարման վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան / :*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը ներկայացրեց տեղեկատվություն սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ: 2025 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ հավաքագրումն ընդհանուր կազմել է 104,6%. Աշտարակ՝ 111.5%, Շամիրամ՝ 111,7%, Ապարան՝ 89,9%, Ալագյազ՝ 102,3%, Մեծաձոր՝ 155,7%, Արևուտ՝ 113,8%, Թալին՝ 102,7%, Ծաղկահովիտ՝ 94,8%: Նշվեց, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած՝ հավաքագրման աճ կա: Համատեղ աշխատանքների արդյունքում Ծաղկահովիտ համայնքը, որը նախորդ ժամանակահատվածնում սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշներն ուներ, մինչև տարվա ավարտը 94,8% հավաքագրում է ապահովել: Կարևորվեց նաև, որ նախորդ տարվա համեմատ 2025 թվականին մարզում հավաքագրման ցուցանիշի աճ է գրանցվել:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց մարզպետի տեղակալ Մ. Հովհաննիսյանին ՏԿ և ՏԻՀ, ֆինանսական վարչության և համայնքների ղեկավարների աջակցությամբ շարունակել պլանավորած ցուցանիշների հավաքագրման գործընթացի վերահսկողությունը:

4. Մարզի համայնքների կողմից 2027-2029թթ միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) և 2026 թվականի համայնքային բյուջեների կազմման և ներկայացման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան /:*

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ համայնքներին տրամադրվող դոտացիաները նախորդ տարվա համեմատ աճել են: Եթե 2018 թվականին այն կազմել է 2,4 միլիարդ, ապա 2026-ին՝ 8,2 միլիարդ: Ներկայացվեց տեղեկատվություն ՀՀ համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու նպատակով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի բաշխման վերաբերյալ:

Զեկուցվեց, որ բոլոր 8 համայնքներն էլ ստացել են անհրաժեշտ խորհրդատվությունը և կազմել, հաստատել և ներկայացրել են իրենց բյուջեները:

5. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2025 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության վարչության պետ Հ. Ստեփանյան /:*

/Զեկույցը կցվում է/:

2022 թվականին հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրերից ավարտվել են 17-ը: 2022 թվականի թվով 19 սուբվենցիոն ծրագրերի համար պետական բյուջեից ֆինանսավորման չափը կազմել է 1 832 028 500 ՀՀ դրամ:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր: 2023 թվականին 20 սուբվենցիոն ծրագրերի համար պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման չափը կազմում է 2 623 090 100 ՀՀ դրամ: 2023 թվականի

սուբվենցիոն ծրագրերից մնացել է միայն մեկ ենթածրագիր, որը չի իրականացվում և չի համաֆինանսավորվել/Բյուրականի մանկապարտեզ/:

2024 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 23 ամբողջական փաթեթ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանը ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 16 ծրագիր: 2025 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից ստացված համաֆինանսավորման չափը կազմել է 3 359 789 900 ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է 2023, 2024 և 2025 թվականների ծրագրեր:

2025 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանն է ներկայացվել 19 սուբվենցիոն ծրագրերի փաթեթ: Ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 10 ծրագիր և 2 ծրագիր դրական-պայմանով: 2025թ. սուբվենցիոն ծրագրերի համար ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորման չափը կազմում է 797 526 100 ՀՀ դրամ:

Ներկայացվեց տեղեկատվություն ավարտված, ընթացքի մեջ գտնվող բոլոր ծրագրերի վերաբերյալ՝ ըստ համայնքների և ոլորտների: Նշվեց, որ 2026 թվականին տրամադրվող սուբվենցիոն ծրագրերի գումարը պարզ կլինի մարտ ամսին, երբ համայնքների կողմից ամբողջական փաթեթները ներկայացված լինեն:

6. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն

/զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան /:

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ պետական բյուջեի միջոցներով «Համայնքների միավորմանը չմասնակցած, ինչպես նաև փոքր համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի» շրջանակում իրականացվել է ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի գազաֆիկացման աշխատանքները: Այդ ծրագրի շրջանակներում իրականցվել է նաև Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի 1.3 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Այս պահի դրությամբ աշխատանքները ավարտված են: Ընթանում են ավարտական ակտի կազմման աշխատանքներ:

Ներկայացվեց նաև 2025 թվականին ՀՀ Արագածոտնի մարզային ավտոճանապարհների ընթացիկ պահպանության վերաբերյալ տեղեկատվություն: 2025 թվականին իրականացվել է մարզային նշանակության 41 կմ ավտոճանապարհների կահավորում և 72.6 կմ գծանշում:

2026 թվականին իրականացվելու են մոտ 70կմ ճանապարհների գծանշման և ճանապարհային կահավորանքով համալրման աշխատանքներ 59.240.920 դրամ արժեքով, իսկ ՀՀ Արագածոտնի մարզային ավտոճանապարհների ընթացիկ պահպանության ուղղությամբ աշխատանքները շարունակվելու են նաև 2026 թվականին:

Նշվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզի 5 մանկապարտեզների շենքերի վերանորոգման աշխատանքների համար մարզպետի աշխատակազմի կողմից հայտարարվել էր մրցույթ: Պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա անհետաձգելի (հրատապ) համարվող ծրագրերի շրջանակներում նախատեսվում են նաև իրականացնել մարզպետի աշխատակազմի վարչական շենքի գազամատակարարման գծի կառուցման, ջեռուցման համակարգի անցկացման, դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներ: Նախագծանախահաշվային փաստաթղթերի

կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքվել է պայմանագիր: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ընթացքի մեջ են:

Ներկայացվեց նաև տեղեկատվություն ՀՀ Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների ասֆալտապատման աշխատանքների, Ալագյազ համայնքի համայնքային կենտրոնի արտաքին բարեկարգման աշխատանքների, ինչպես նաև «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչված հողակտորների օտարման գործընթացի մասին:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց ոլորտային պատասխանատուներին շարունակել վերահսկողությունը մարզում իրականացվող բոլոր շինարարական աշխատանքների ընթացքին:

Այլ հարցերի շրջանակում մարզպետ Ս. Մովսիսյանի կողմից եղան հարցադրումներ մարզի տարբեր համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ, տրվեցին հստակ հանձնարարականներ ոլորտային պատասխանատուներին:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **Սերգեյ Մովսիսյան**